



ՀՀ ԿԳՄՄՆ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՔՈԼԵՋ

ՈՒՍՈՒՄՆԱՕՓԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ

Քննարկվել և հավանության է արժանացել՝  
ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
«Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական  
հաշվառման» ամբիոնի 30.09.2022թ N3 նիստում

ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռ. Բաղդասարյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	5
ԳԼՈՒԽ 2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ .....	9
ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	16
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	21
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	22

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ֆինանսավարկային համակարգում առևտրային բանկերի նշանակությունն այնքան մեծ է, որ անհրաժեշտություն է առաջանում առանձնահատուկ ուշադրություն դարձնել այդ կառուցվածքի գործառույթների և գործունեության հիմնական ուղղությունների գնահատման վրա: Ֆինանսական շուկայի ձևավորման ոլորտում իրականացված բարեփոխումներում, դրանց համակարգվածության ու ամբողջականության աստիճանով առանձնանում է բանկային համակարգը: Արդյունքում, ֆինանսական շուկայի միակ կայացած ինստիտուցիոնալ մասնակիցները՝ բանկերն են:

Բանկը բացառիկ կազմակերպություն է, որը բացառիկ իրավունք ունի ամբողջությամբ իրականացնել հետևյալ գործառնությունները. ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավել դրամական միջոցներ, իր անունից և ռիսկով տեղաբաշխել այդ դրամական միջոցները, բացել և վարել բանկային հաշիվներ:

Երկրի տնտեսության զարգացումը և բնակչության կենսամակարդակի բարձրացումը ուղղակիորեն կախված է բանկային համակարգի վիճակից: Բանկը առանձնահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը ներգրավում է ավանդներ, տրամադրում է վարկեր, մատուցում տարբեր ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց: Բանկերը կատարում են նաև հաճախորդների վճարման հանձնարարականները, այդ թվում՝ դրամական միջոցների փոխանցումներ, գնում կամ վաճառում են արժեթղթեր, կառավարում հավատարմագրային հաշիվներ, իրականացնում ֆակտորինգային, լիզինգային և այլ ֆինանսական գործառնություններ:

Բանկերի հիմնական նպատակը առավելագույն շահույթի ստացումն է, որը հաճախ հակասության մեջ է մտնում իրացվելիության ապահովման հետ, քանի որ բարձր իրացվելի ակտիվները որպես կանոն եկամտաբեր չեն կամ ունեն ցածր եկամտաբերություն:

Այսօր հեռահաղորդակցման նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ բանկերը հնարավորություն ունեն իրականացնելու տարաբնույթ գործառնություններ՝ հաճախորդներից և գործընկերներից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվելով: Բանկային համակարգը աստիճանաբար աշխատատար տեխնոլոգիաներից անցում է կատարում ֆինանսական ծառայությունների ավտոմատ մատուցման կապիտալատար տեխնոլոգիաների: Պահանջվող լրացուցիչ կապիտալ ներդրումները բանկերը կարող են ծածկել միայն մատուցվող ծառայությունների ոլորտի ընդլայնման հաշվին:

Ժամանակակից շուկայական տնտեսությունում բանկերը չափազանց կարևոր ֆինանսական ինստիտուտներ են: Դրանք վարկի հիմնական աղբյուր են ծառայում միլիոնավոր ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար: Ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարելիս կազմակերպություններն ու սպառողները շատ հաճախ օգտվում են փոխառու աղբյուրներից՝ գործածելով բանկային չեկեր կամ վարկային քարտեր:

Ինչպես ազգային, այնպես էլ միջազգային շուկաներում բանկերն իրենց հաճախորդներին հատկացնում են ավելի շատ սպառողական վարկեր, քան ցանկացած այլ ֆինանսական կազմակերպություններ: Բանկերը գրեթե միշտ հանդես են գալիս որպես փոխառությունների և պետական մարմինների կողմից թողարկվող

կարճաժամկետ արժեթղթերի հիմնական գնորդներ: Բանկերը միաժամանակ համարվում են կազմակերպությունների կարճաժամկետ փոխառու կապիտալի ձևավորման կարևորագույն աղբյուր, իսկ վերջին ժամանակներում ավելի մեծ ակտիվություն են դրսևորում կազմակերպությունների հիմնական կապիտալի համալրման նպատակով երկարատև վարկեր առաջարկելու գործում: Բանկերի տնտեսական դերը հասարակական պահանջմունքների բավարարման գերծում բավականին մեծ է: Շնորհիվ բանկի ճկուն գործունեության՝ դրամական միջոցները վերաբաշխվում են տնտեսության տարբեր ոլորտների ու արտադրությունների միջև, միաժամանակ, հավաքագրվում են հասարակության մեջ եղած ժամանակավոր ազատ դրամական միջոցները:

## ԳԼՈՒԽ 1.

### ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բանկերը այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը, թղթադրամների և տարբեր արժեքների թողարկումը:

Բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և դրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Վերջինս իրենից ներկայացնում է ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից ու ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու կամ ներդրումներ կատարելու միջոցով:

Խոսելով ժամանակակից առևտրային բանկերի մասին, անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես և ֆինանսավարկային կազմակերպությունների համակարգի մյուս կառուցվածքները, դրանք գտնվում են մշտական զարգացման փուլում: Փոխվում է գործունեության ուղղվածությունը և գործառույթների համակարգը, մրցակցության մեթոդները, վերահսկման ու կառավարման մակարդակները:

Առևտրային բանկերը, Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով, իրականացնում են ֆինանսական գործունեություն, հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. ընդունել պահանջ և ժամկետային ավանդներ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր
2. բացել և վարել հաշիվներ՝ այդ թվում՝ թղթակցային հաշիվներ
3. տրամադրել բանկային երաշխիքներ կամ ակրեդիտիվներ
4. մատուցել վճարահաշվարկային ծառայություններ
5. իրականացնել ներդրումային գործունեություն
6. մատուցել ֆինանսական գործակալի ծառայություններ
7. գնել, վաճառել թանկարժեք մետաղի ձուլակտորներ և այլն:

Առևտրային բանկերի կողմից վճարամիջոցների ստեղծումը սերտորեն կապված է ավանդային գործառնությունների և բանկային հաճախորդների վարկավորման գործառույթների հետ: Բանկային գործունեության երկրորդ խոշոր ֆունկցիոնալ ոլորտը ներառում է վարկային միջնորդությունները: Առևտրային բանկերը տնտեսական միավորների միջև կատարում են միջնորդների դեր, որոնք կուտակում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և այնուհետև այն վերաբաշխում: Բանկային վարկը նույնպես ֆինանսական ծառայությունների շատ հարմար և որոշ դեպքերում նաև անփոխարինելի ձև է, որը հնարավորություն է տալիս հաշվի առնել տվյալ փոխառուի պահանջմունքները՝ վերջիններիս հարմարեցնելով վարկի ստացման պայմանները:

Վերը թվարկված բոլոր գործառնությունները բաժանվում են երկու խմբի՝ պասիվային, որոնց շնորհիվ առևտրային բանկերը ձևավորում են իրենց դրամական պաշարները, և ակտիվային, որոնց շնորհիվ բանկը տեղաբաշխելով իր այդ ներգրավված միջոցները, դրանք օգտագործում է շահույթ ստանալու նպատակով:

Իսկ Կենտրոնական բանկը բանկերի համար սահմանում է բանկային գործունեության մի շարք տնտեսական նորմատիվներ, որոնցից ամենահիմնականներն են՝ բանկի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը.

- ❖ բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվները՝
- ❖ բանկի իրացվելիության նորմատիվները՝
- ❖ մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը.
- ❖ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափը, այդ թվում՝ բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը.
- ❖ Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը.
- ❖ արտարժույթի տնօրինման նորմատիվը:

Ինչպես արդեն նշեցինք, բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և դրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն: Յուրաքանչյուր երկրի բանկային համակարգ, որի բաղկացուցիչ մասն են հանդիսանում առևտրային բանկերը, ունի զարգացման իր առանձնահատկությունները:

Զարգացած մի շարք երկրներում բանկերը կարևոր դեր ունեն նաև առանձին անհատ-քաղաքացիների կյանքում: Նրանք իրենց դրամական բոլոր տեսակի գործառնություններն ու գործարքները կատարում են բանկերի միջոցով՝ պլաստիկ քարտերի, չեկերի և այլ միջոցներով: Դա նշանակում է, որ բանկերի գործունեության զարգացումը լայն հանարավորություններ է ստեղծում անկանխիկ վճարման համակարգի ընդլայնման համար:

Բանկի էությունը կարևորվում է նաև հասարակական վերարտադրության գործընթացի նրա ունեցած կարգավորիչ նշանակությամբ: Այսպես, այդ վերարտադրության գործընթացում, ապրանքային ռեսուրսների ու դրամական միջոցների շրջապտույտի օրինաչափություններով պայմանավորված, առաջանում են դրամական միջոցներ, որոնք ընդհուպ մինչև դրանց սեփականատիրոջ կողմից օգտագործվելը, ազատ են: Ահա բանկն այն կարգավորող մարմինն է, որը շահույթ ստանալու նպատակով և բանկի իրացվելիության պահպանման համար, իր ակտիվային գործառնություններում կատարում է նման դրամական միջոցների բաշխում՝ ըստ տնտեսվարող սուբյեկտների պահանջի:

Առևտրային բանկերի ակտիվներն ու պասիվները սերտորեն կապված են միմյանց հետ: Դուրս գալով վարկային շուկա, գնելով ու վաճառելով արժեթղթեր, ինչպես նաև հաճախորդներին տրամադրելով դրամական հաշվարկների տարբեր ծառայություններ, բանկերը մշտապես վերահսկում են իրենց պասիվները, մյուս կողմից էլ, եթե ռեսուրսների մուտքը բանկ ուշանում է, կամ չի ապահովում ամբողջությամբ ընդունած պահանջների կատարումը, ապա բանկը վերանայում է իր քաղաքականությունը ակտիվային գործառնություններում:

Ինչպես ազգային, այնպես էլ միջազգային շուկաներում բանկերն իրենց հաճախորդներին հատկացնում են ավելի շատ սպառողական վարկեր, քան ցանկացած այլ ֆինանսական կազմակերպություններ: Բանկերը գրեթե միշտ հանդես են գալիս որպես փոխառությունների և պետական մարմինների կողմից թողարկվող կարճաժամկետ արժեթղթերի հիմնական գնորդներ: Բանկերը միաժամանակ համարվում են կազմակերպությունների կարճաժամկետ փոխառուկապիտալի ձևավորման կարևորագույն աղբյուր, իսկ վերջին ժամանակներում ավելի մեծ ակտիվություն են դրսևորում կազմակերպությունների հիմնական կապիտալի համալրման նպատակով երկարատև վարկեր առաջարկելու գործում:

ՀՀ-ում նոր տնտեսվարման հարաբերությունների ձևավորման օրվանից, աստիճանաբար տեղի ունեցավ բանկային համակարգի վերակառուցում, որը և սկսեց նպաստել շուկայական տնտեսության զարգացմանը:

#### **Բանկերի դասակարգումը.**

Իրենց էության միասնականությամբ հանդերձ, բանկերը բազմատեսակ են: Դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ տվյալ երկրում բանկային գործի պատմական զարգացման և կազմակերպման առանձնահատկություններով օրենսդրական դաշտով, միջազգային ինտեգրման աստիճանով, ազգային սովորույթներով և այլն:

*Պետական* են համարվում այն բանկերը, որոնք գտնվում են պետության սեփականության ներքո, այսինքն՝ որոնց կանոնադրական հիմնադրամն ամբողջությամբ պատկանում է տվյալ երկրի պետությունը:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հանդես գալու որպես առևտրային բանկի մասնակիցներ:

*Համատեղ* բանկերը տեղական և օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ստեղծված բանկերն են: Ստեղծվում են տարբեր երկրներում գտնվող տնտեսավարող սուբյեկտների ջանքերի միավորման ճանապարհով զանազան բանկային ծառայություններ առավել արդյունավետ տրամադրելու նպատակով:

Ըստ ռեզիդենտության հայտանիշի՝ բանկերը դասակարգելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, թե որ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով և որ երկրում են դրանք գործում:

Ըստ տարածքային հայտանիշի՝ դասակարգման ժամանակ հաշվի է առնվում տվյալ բանկի կողմից սպասարկվող հաճախորդների և գործառնությունների իրականացման աշխարհագրությունը: Դրանցից են, օրինակ՝ մունիցիպալ բանկեր, որոնք ծառայություններ են մատուցում որոշակի տարածաշրջաններում: Ի տարբերություն դրանց, միջտարածաշրջանային բանկերը սպասարկում են մի քանի տարածաշրջանների պահանջմունքները:

*Ազգային* բանկերը գործունեություն են իրականացնում երկրի ներսում և սպասարկում են գլխավորապես իրենց երկրի հաճախորդներին:

*Միջազգային* բանկը խոշոր ունիվերսալ ֆինանսավարկային հիմնարկություն է, որը գործում է մի քանի երկրներում: Այդ բանկերը փոխատվական կապիտալների շուկայում գլխավոր միջնորդներն են:

*Ռուստր* բանկը ձևական առումով անկախ առևտրաընկերություն է, որի նկատմամբ իրական հսկողությունն իրականացնում է մեկ այլ բանկ, որը դրա ուժով հանդես է գալիս որպես, այսպես կոչված, մայր բանկ: Այդպիսի փոխհարաբերությունների պայման է մայր բանկի բաժնետոմսերի հսկիչ ծրարի տիրապետումը:

*Լիազորված* կամ գործակալական են համարվում այն բանկերը, որոնք պետական մարմինների հետ կնքված պայմանագրերով նրանց համար կատարում են այս կամ այն գործառնությունները:

*Կոնտրոլինալ* բանկերն մասնակցում են բաժնետոմսերի հսկիչ ծրար չունեցող առնվազն երկու մասնակից: Դրանք իրենցից ներկայացնում են բաժնետիրական տիպի համատեղ բանկային միավորումներ, որոնք պատկանում են մի քանի բանկերի, ֆինանսական ընկերությունների: Կոնտրոլինալ բանկերը լայն տարածում են ստացել 1960-ական թվականների երկրորդ կեսից եվրաթույթի շուկայում գործառնություններ կատարելու համար: Ռիսկերի դիվերսիֆիկացման շնորհիվ ունիվերսալ բանկերը սովորաբար ավելի կայուն են, քան մասնագիտացված բանկերը:

Բանկերի դասակարգումը խոշոր, միջին և փոքր բանկերի խիստ պայմանական է: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված բանկերի գործունեության հասմեմատական վերլուծության Բանկերը դասակարգվում են խոշոր, միջին և փոքր բանկերի խմբերի՝ կախված բանկի ընդհանուր ակտիվների մեծությունից: Ընդ որում, ըստ չափերի բանկերի դասակարգումը ժամանակի ընթացքում նույնպես փոփոխում է՝ պայմանավորված ամբողջ համակարգի և առանձին բանկերի ընդհանուր ակտիվների ծավալի ավելացմամբ:



## ԳԼՈՒԽ 2.

### ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

#### Առևտրային բանկը որպես տնտեսվարող սուբյեկտ.

Ժամանակակից պատկերացումներով առևտրային բանկը յուրահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը հանդես է գալիս որպես ֆինանսական միջնորդ դրամագան միջոցներ տրամադրողների և օգտագործողների միջև: ՀՀ օրենսդրությունը առանձնացնում է բանկը այլ ֆինանսական միջնորդներից մի հատկանիշով՝ ավանդների տեսքով ֆինանսական միջոցներ տրամադրելու, ներգրավելու կամ նման առաջարկությամբ հանդես գալու իրավասությամբ, ինչը առանձնահատուկ կարգավիճակ է հաղորդում բանկին: Բանկի ֆինանսական միջոցների հավաքագրման աղբյուրներ կարող են հանդիսանալ նաև բանկերից կամ այլ հաստատություններից ստացած փոխառությունները, թողարկած արժեթղթերը և սեփական կապիտալը: Առանձնահատուկ ֆինանսական միջնորդ լինելու պարագայում բանկն իր հաճախորդների համար կարող է հանդես գալ նաև որպես գործակալ՝ կատարել վճարումներ երրորդ անձանց համար, ընդունել և վճարել չեկեր, գնել վաճառել և փոխանակել արտարժույթ ու արժեթղթեր, հսկել դրամական միջոցների շարժը, դրամի և արժեթղթերի շրջանառությունը, իրականացնել անկանխիկ հաշվարկներ, մատուցել ծառայություններ: Ընդ որում, այլ ֆինանսական միջնորդները ևս օգտվում են բանկի կողմից մատուցվող այդ ծառայություններից և հանդիսանում են բանկի հաճախորդ:

Առևտրային բանկի հիմնական նպատակը՝ առավելագույն շահույթի ստացումը, հաճախ հակասության մեջ է իրացվելիության ապահովման հետ, քանի որ բարձր իրացվելի ակտիվները, որպես կանոն, ունեն ցածր եկամտաբերություն: Բացի դրանից, բանկերը պետք է ապահովեն ոչ միայն քանակական, այլև ժամկետային համապատասխանություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև: Եթե բանկը ներգրավել է կարճաժամկետ միջոցներ, ապա իրականացվող ներդրումները նույնպես պետք է ունենան կարճաժամկետ բնույթ, այլապես կվտանգվի բանկի իրացվելիությունը:

Բանկերը ֆինանսական շուկայի միակ մասնակիցները չեն: Սակայն գոյություն ունեն առնվազն հետևյալ հատկանիշները, որոնք առևտրային բանկն է էականորեն տարբերում մասնակից հանդիսացող ցանկացած այլ հաստատությունից՝

1. Ֆինանսական շուկայում իբրև առաջնային, ելակետային և գլխավոր օղակ հանդես գալը: Բանկերի գործունեությունն էապես կանխորոշում է վարկային կազմակերպությունների գործունեության բնույթը, այն հարաբերությունների շրջանակը, որոնցում դրանք հանդես են գալիս: Վարկային կազմակերպությունները մյուս հաճախորդների հետ միասին սպասարկվում են բանկերի կողմից: Բանկերը միակ կազմակերպություններն են, որոնք իրականացնում են դրամական բոլոր գործառնությունները: Նրանք կողմնորոշված են դեպի գործունեության

ունիվերսալությունը,ի տարբերություն այն վարկային կազմակերպությունների,որոնք մասնագիտացված են առանձին ֆինանսական գործառնությունների գծով: Մա իհարկե,չի նշանակում,թե ցանկացած բանկ յուրաքանչյուր պահի կատարում է ֆինանսական շուկայի բոլոր գործառնությունները՝բանկը պարզապես պետք է պատրաստ լինի դրան:

2.Բանկային ավանդներ ներգրավելու և բանկային հաշիվներ բացելու բացառիկ,մենաշնորհային իրավունքը:Համաձայն ՀՀ օրենսդրության՝բանկերը տարբերվում են վարկային այլ կազմակերպություններից առաջին հերթին նրանով,որ կարող են միջոցներ ներգրավել բանկային ավանդների ձևով,ինչպես նաև բացել և վարել բանկային հաշիվներ:Հենց այդ երկու գործառնությունների իրականացման իրավունքի բացակայությունը ոչ բանկերին սկզբունքորեն տարբերում է բանկերից:Եվ պատահական չէ,որ ոչ բանկերի նկատմամբ,բանկերի համեմատությամբ,կիրառվում է կարգավորման ավելի մեղմ ռեժիմ,քանի որ ոչ բանկերի գործունեության մեջ բացակայում են բանկային ավանդներով և հաշիվներով ռիսկերը:

Այսպիսով,առևտրային բանկերն ունեն յուրահատուկ դեր տնտեսության մեջ,մի շարք հատկանիշներով տարբերվում են այլ ֆինանսական միջնորդներից և այլ առևտրային շահույթ հետապնդող կազմակերպություններից:Շուկայական տնտեսությունում բանկերն առավել կարևոր ֆինանսական կազմակերպություններ են,ինչպես վարկավորման ծավալով,այնպես էլ տնտեսական շրջանառության սպասարկման նշանակությամբ:Հանդիսանալով հիմնական ֆինանսական միջնորդներ՝ բանկերը առանձնահատուկ դերակատարություն ունեն ոչ միայն ֆինանսական շուկայում,այլև ամբողջ տնտեսության մեջ,որի պատճառով էլ գտնվում են կարգավորման և վերահսկողության հատուկ դաշտում:

**Բանկերի դասակարգումը.**

Իրենց էության միասնականությամբ հանդերձ,բանկերը բազմատեսակ են:Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են և կիրառվում են բանկերի տարբեր դասակարգումներ՝ ըստ տարբեր հայտանիշների:

**Առևտրային բանկերի դասակարգումը ըստ տարբեր հայտանիշների՝**

<b><u>Դասակարգման հայտանիշներ</u></b>	<b><u>Բանկերի տեսակները</u></b>
<i>Մեփականության ձևը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• պետական</li> <li>• ոչ պետական</li> <li>• խառը</li> </ul>
<i>Կապիտալի պատկանելիությունն ըստ երկրների</i>	<ul style="list-style-type: none"> <li>• տեղական</li> <li>• օտարերկրյա</li> <li>• համատեղ</li> </ul>
<i>Ռեզիդենտությունը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• ռեզիդենտ</li> <li>• ոչ ռեզիդենտ</li> </ul>
<i>Տարածքային ընդգրկումը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• մունիցիպալ</li> <li>• միջտարածաշրջանային</li> <li>• ազգային</li> <li>• միջազգային</li> </ul>

<i>Անկախության աստիճանը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• ինքնուրույն</li> <li>• դուստր</li> <li>• լիազորված</li> <li>• կոնսորցիոնալ</li> </ul>
<i>Գործունեության բնույթը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• ունիվերսալ</li> <li>• մասնագիտացված</li> </ul>
<i>Ճյուղային մասնագիտացումը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• շինարարություն</li> <li>• գյուղատնտեսական</li> <li>• ներմուծման-արտահանման</li> <li>• բնակկոմունալ և այլն</li> </ul>
<i>Ֆունկցիոնալ մասնագիտացումը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• ինովացիոն</li> <li>• ներդրումային</li> <li>• խնայողական</li> <li>• հիփոթեքային և այլն</li> </ul>
<i>Գործունեության մասշտաբը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• խոշոր</li> <li>• միջին</li> <li>• փոքր</li> </ul>
<i>Մասնաճյուղերի թիվը</i>	<ul style="list-style-type: none"> <li>• բազմամասնաճյուղ</li> <li>• առանց մասնաճյուղի</li> </ul>

*Պետական* են համարվում այն բանկերը, որոնք գտնվում են պետության սեփականության ներքո, այսինքն՝ որոնց կանոնադրական հիմնադրամն ամբողջությամբ պատկանում է տվյալ երկրին: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն հանդես գալու որպես առևտրային բանկի մասնակիցներ:

**Բանկերի կազմակերպական կառուցվածքը.**

Բանկն առանձնահատուկ կառավարման օբյեկտ է, որի կարևոր բնութագրերից մեկն է նրա կազմակերպական կառուցվածքը: Ճիշտ ընտրված կազմակերպական կառուցվածքը, դրա ժամանակին վերանայումը փոփոխվող ներքին և արտաքին գործոններին համապատասխան՝ բանկի ռազմավարության, նրա առջև դրված խնդիրների իրագործման և արդյունավետ գործունեության գրավականն է:

Բանկի, ինչպես և ցանկացած այլ հաստատության կազմակերպական կառուցվածքը պարունակում է բոլոր առևտրային կազմակերպություններին բնորոշ ստորաբաժանումները՝ ղեկավար և գործադիր մարմիններ, հաշվապահություն, կադրային ծառայություն և այլն: Դրա հետ մեկտեղ բանկն առանձնահատուկ տնտեսվարող սուբյեկտ է, որը պայմանավորվում է նրա կազմակերպական կառուցվածքի առանձնահատկությունները, այնպիսի ստորաբաժանումների առկայությունը, որոնք չեն հանդիպում առևտրային այլ կազմակերպություններում: Տարիների ընթացքում բանկերում ձևավորվել են կազմակերպական կառուցվածքների տեսակներ, որոնցից յուրաքանչյուրը հարմարեցվել է այն գործառնությունների իրականացմանը, որոնց կարիքը զգում են սպառողները: Յուրաքանչյուր բանկ ձևավորում է իր կառուցվածքային ստորաբաժանումները և որոշում դրանց միջև

փոխհարաբերությունների կարգը՝ էլնելովբանկի կազմակերպական ձևից, իրականացվող գործառնությունների և մատուցվող ծառայությունների տեսակներից: Բանկի կառուցվածքում առանձնանում են երկու՝ *կազմակերպական* և *կառավարման* կառուցվածքներ: Առաջինը վերաբերում է բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կազմին և դրանց միջև փոխհարաբերություններին, իսկ երկրորդը՝ բանկի կառավարման մարմիններին և դրանց իրավասություններին, կառավարման տարբեր մակարդակներում գտնվող կառավարման օղակներին, նրանցում աշխատող կառավարման անձնակազմին, պաշտոններին, որոնց դեպքում ղեկավար-ենթակա փոխհարաբերություններն իրականացվում են կառավարման ենթակայության համակարգերով: Բանկի կազմակերպական և կառավարման կառուցվածքները հաճախ խաչվում են, և բանկի կառուցվածքը ներկայացվում է որպես կազմակերպական-կառավարման կառուցվածք: Բանկն իր տարածքից դուրս գործունեություն կարող է իրականացնել միայն մասնաճյուղի կամ ներկայացուցչության ձևով: Հետևաբար, տարածքային ստորաբաժանումներ ունեցող բանկերի կառուցվածքի մեջ են մտնում նաև այդ ստորաբաժանումները: Առևտրային բանկի կազմակերպական կառուցվածքի վրա ազդում են մի շարք գործոններ, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող գործառնությունները, բանկի մեծությունը, համապատասխան ունակություններ և հմտություններ ունեցող մասնագետների առկայությունը, ծախսերի տնտեսման խնդիրները, բանկի մասնագիտացման մակարդակը:

Բանկի կազմակերպական կառուցվածքը պայմանավորված է նրա կողմից տրամադրվող ծառայությունների տեսականիով, քանի որ կազմակերպական կառուցվածքի առումով բանկերը սովորաբար կազմվում են այնպես, որպեսզի առավելագույնս արդյունավետ իրագործեն իրենց առջև դրված խնդիրները: Բանկի մեծությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ ավելի խոշոր բանկերում, որպես կանոն, առաջարկվում է ծառայությունների ավելի մեծ շրջանակ: Խոշոր բանկը միավորում է մեծ թվով աշխատակիցների, տարբեր վարչություններ, իսկ դրա կազմում՝ հատուկ բաժիններ: Փոքր բանկերում աշխատում են սահմանափակ թվով աշխատակիցներ, որոնք միավորված են ընդամենը մի քանի բաժիններում (օրինակ՝ ավանդային, վարկային, արտարժութային, գործառնական բաժիններում, հաշվապահությունում և այլն):

Առևտրային բանկի կառուցվածքի վրա որոշակի ազդեցություն է թողնում անձնակազմի առկայությունը: Բանն այն է, որ որոշ դեպքերում բանկերը չեն կարողանում ընդլայնել իրենց կողմից իրականացվող գործառնությունների ու մատուցվող ծառայությունների տեսականին և ստեղծել լիարժեք կառուցվածքային ստորաբաժանումներ՝ համապատասխան որակավորում, տվյալ գործառնություններն իրականացնելու համար անհրաժեշտ ունակություններ ու հմտություններ ունեցող կադրերի բացակայության պատճառով: Իր կազմակերպական կառուցվածքը ձևավորելիս բանկը պետք է էլնի նաև ծախսերի տնտեսման, բանկային անձնակազմի

ծանրաբեռնվածության անհրաժեշտությունից: Բանկը, հետապնդելով շահույթ ստանալու նպատակ, չի կարող հավաքագրել ավելորդ անձնակազմ, քանի որ դա կբերի աշխատանքի վարձատրության, ծախսերի ավելացման: Ուստի, բանկը պետք է ձևավորի այնպիսի աշխատակազմ, որը բավարար է աշխատանքների համապատասխան ծավալը կատարելու համար և ապահովում է նրանց անհրաժեշտ ծանրաբեռնվածությունը:

Այսպիսով,բանկերի կազմակերպական կառուցվածքը պետք է լինի ճկուն, որը կարող է պայմանավորված լինել ինչպես բանկի զարգացման ռազմավարությամբ, այպես էլ հաճախորդներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման, առկա ռիսկերի արդյունավետ կառավարման, ընթացիկ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ և մի շարք այլ գործոններով:

### **Բանկերի կառավարումը.**

*Կառավարումը* ուսումնառության առանձին ճյուղ է, որին նվիրված են բազմաթիվ հրապարակումներ: Կառավարման ընդհանուր հիմունքները,արդ թվում `սկզբունքերը, տարրերը, ձևերը կիրառելի են նաև բանկերի` որպես կառավարման օբյեկտի նկատմամբ: Առևտրային բանկերի հաջողության կարևորագույն գրավականներից է նրա կառավարումը, որի դերը աստիճանաբար ավելի է մեծանում `կապված, մասնավորապես, մրցակցության ուժեղացման,բանկային ռիսկերի խելամիտ կառավարման հետ: Ելնելով դրանից ՀՀ բանկային օրենսդրությամբ` որոշակի պահանջներ են սահմանված ինչպես բանկի կառավարման մարմինների, այնպես էլ նրա ղեկավարների նկատմամբ: Համաձայն <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքի` բանկի կառավարման մարմիններն են`

- բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը,
- բանկի խորհուրդը
- բանկի գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքում` բանկի տնօրինությունը կամ վարչությունը:

Բանկի կառավարման մարմինների ընտրության կամ նշանակման կարգը,իրավասությունները սահմանվում են օրենքով և բանկի կանոնադրությամբ: Ցանկացած կազմակերպական-իրավական ձևով ստեղծված բանկի կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է, որը լուծում է բանկի բոլոր ռազմավարական խնդիրները: <<Մասնակիցներ>> բառը բանկի դեպքում օգտագործվում է որպես հավաքական հասկացություն, որը կիրառվում է կազմակերպական-իրավական բոլոր ձևերի բանկերի նկատմամբ: *Բանկի մասնակիցներ* են համարվում բանկի հիմնադիրները,բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի բաժնետերերը, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի և կոոպերատիվ բանկի մասնակիցները (փայտատերերը, անդամները):Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են

նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

**Բանկի խորհուրդն** իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը որոշում է բանկի գործունեության նախապատվելի ուղղությունները, հաստատում բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը, վարկային քաղաքականությունը, ներքին հսկողության մեխանիզմը, գումարում բանկի մասնակիցների տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովները, հաստատում դրանց օրակարգը և այլն: Նրա անդամները սովորաբար ընտրվում են բանկի մասնակիցների թվից, դրանց թիվը կարող է շատ տարբեր լինել, սակայն բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից: Ընդ որում, բանկի խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն:

**Բանկի վարչությունը** գործում է բանկի կանոնադրության, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա: Բանկի գործադիր մասնիների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է բանկի խորհրդի որոշմամբ: Բանկի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի: Բանկի գործադիր մարմինը կազմակերպում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի և բանկի խորհրդի որոշումների կատարումը: Նա ղեկավարում է բանկի ընթացիկ գործունեությունը, հաշվետու է բանկի խորհրդին և մասնակիցների ընդհանուր ժողովին:

**Բանկի ղեկավարներ** են համարվում բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղականները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: (բացառությամբ բանկի կառուցվածքային ստորաբաժանումների, ղեկավարների) փոփոխությունները ենթակա են գրանցման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կարգով: Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա հստակորեն ձևակերպված իր հիմնական նպատակը (առաքելությունը), որը տվյալ բանկը տարբերում է մրցակիցներից և որին համապատասխանում են բանկի կառավարման նպատակները:

Բանկի կառավարման սկզբունքներն են՝

- գործող օրենսդրության նորմերի կատարումը,
- հաճախորդների, այլ բանկերի հետ փոխհարաբերությունների կամավորությունը և փողշահավետությունը, պայմանագրային բնույթը,
- հաճախորդների համար լավագույն հարմարությունների ստեղծումը,
- բանկային ռիսկերը նվազագույնի հասցնելը,

▪ ֆինանսական շուկայի մրև մասնակիցների հետ բարեխիղճ մրցակցությունը,

▪ շահույթն առավելագույնի հասցնելը

▪ իրացվելիության ապահովումը,

▪ մշտական կողմնորոշվածությունը դեպի նորությունը (տեխնոլոգիաների և աշխատանքի մեթոդների նորացումն ու կատարելագործումը): Առևտրային բանկերի գործունեությունը կառավարելու համար ստեղծվում են նրա կառավարչական ապարատը (աշխատակազմը), իսկ դրանում՝ կառավարման մի շարք համակարգեր (կառավարող և կառավարվող), կառավարման օղակներ՝ ըստ մասնագիտացված ծառայությունների բնույթի:

Բանկի կառավարումն ունի աստիճանակարգված (հիերարխիկ) կառուցվածք, որը բաղկացած է բարձր, միջին և ցածր օղակներից: Կառավարման բարձր օղակում՝ բանկի կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտի, վարչության, բաժնի) ղեկավարները, իսկ ցածր օղակում՝ ստորաբաժանումների մասնագետները և սպասարկող անձնակազմը: Պետք է նշել, որ միջին օղակի ղեկավարների գործառույթների մեջ կատարվել են զգալի փոփոխություններ՝ շնորհիվ անհատական համակարգիչների լարն օգտագործման: Բարձր օղակի ղեկավարությունը շատ տեկեղություններ սկսել է ստանալ անմիջապես ցածր օղակից, որն ավելի է բարձրացնում տեկեկատվության հավաստիությունը և կառավարման արդյունավետությունը: Արդյունավետ կառավարումը ենթադրում է հստակ ձևակերպված ռազմավարության մշակում, պարտավորությունների և իրավասությունների բաշխում, ներառյալ որոշումների ընդունման հիերարխիկ կառուցվածքը՝ առանձին ստորաբաժանումների ղեկավարներից մինչև բանկի կառավարման գերագույն մարմինը՝ բանկի խորհուրդը:

Այսպիսով, բանկի հուսալի և կայուն զարգացումը, մրցունակությունը և գործարար բարի համբավն անհնար է պատկերացնել առանց խելամիտ կառավարման: Ուստի, բանկերի գործունեությունը կարգավորող մարմինների կողմից այն դիտվում է որպես բանկի գործունեության գնահատման կարևորագույն բաղադրիչ, իսկ օրենսդրությամբ սահմանվում են մի շարք պահանջներ կառավարման մարմինների և ղեկավարների նկատմամբ:

### ԳԼՈՒԽ 3.

#### ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից տնտեսությունն իր զարգացմանը զուգընթաց նորանոր պահանջներ է դնում ֆինանսական շուկայի և նրա մասնակիցների առջև, որն արտահայտվում է շուկայի մասնակիցների բազմազանացման, դրանց խորացող մասնագիտացման, մասնագիտացված հաստատությունների ձևավորման տեսքով: Ֆինանսական միջնորդությունը, որը հանդիսացել է ֆինանսական շուկայի և նրա առանձին հատվածների ձևավորման ու զարգացման կարևոր գործոն, ներկայումս ստացել է նոր որակներ և հատուկ ֆինանսական շուկայի մասնակիցների լայն շրջանակին: Ուժեղացող մրցակցության պայմաններում բանկերը ֆինանսական միջնորդների շարքում օրենսդրորեն իրենց ամրագրված տեղով և դերով առավելապես ձգտում են նոր և որակյալ ծառայություններ առաջարկել իրենց հաճախորդներին և դրանով իսկ առավել գրավիչ դարձնել միջոցների հավաքագրման և տեղաբաշխման՝ բանկի ավանդական գործառնությունները: Լայն իմաստով, բանկի գործունեության տարբերությունը այլ ֆինանսական միջնորդության տեսակներից բխում է բանկ-հաճախորդ հարաբերությունների առանձնահատուկ բնույթից: Թե որպես ձեռնարկություն և տնտեսավարման ընդհանուր դաշտում գործող հաստատություն, թե որպես ֆինանսական շուկայի մասնակից և շահույթ ստանալու նպատակ հետապնդող հաստատություն, բանկը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով, որոնք բխում են բանկի կողմից հաճախորդների սպասարկումն իրականացնելու և ծառայություններ մատուցելու՝ օրենքով սահմանված իրավասությունների ամբողջությունից:

Գործող օրենսդրությունը սահմանում է այն ֆինանսական գործառնությունների ցանկը, որ կարող է իրականացնել բանկը տրված լիցենզիայի հիման վրա և արգելում արտադրական, առևտրային և ապահովագրական որևէ այլ գործունեության իրականացում, որը չի բխում բանկային գործունեությունից: Բանկերի կողմից իրականացվող գործառնությունները սովորաբար կանոնակարգվում են տվյալ երկրի օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքով կանոնակարգվում են ոչ միայն բանկի ընդհանուր իրավունակության շրջանակները, այլև սահմանվում է ՀՀ տարածքում գործող բանկերի, դրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ցանկը: Բանկերը կարող են իրականացնել ներդրումային գործունեություն՝ իրենց կամ հաճախորդի անունից և հաշվին, գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր, ինչպես նաև իրականացնել բաժանորդագրական գործունեություն՝ տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր: Օրենսդրությունը բացառիկ իրավունք



Է տալիս առևտրային բանկերին՝ կենտրոնական բանկի թույլտվությամբ իրականացնել ֆինանսական գործառնությունների ցանկում գործառնություններ, որոնք էականորեն չեն վտանգում բանկի ավանդատուների և վարկատուների շահերը:

Համաձայն Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի՝ Հաբաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը կարող են իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

Վճարահաշվարկային գործառնություններ	Հաշիվների՝ այդ թվում բանկերի թղթակցային հաշիվների բացում և մարում, վճարահաշվարկային ծառայությունների մատուցում և հաճախորդների հաշիվների սպասարկում.
Ավանդային գործառնություններ	Ցպահանջ ավանդների ընդունում, ժամկետային ավանդների ընդունում.
Վարկային գործառնություններ	Առևտրային և սպառողական վարկերի տրամադրում, Միջբանկային վարկերի տրամադրում և ներգրավում.
Արժեթղթերով և այլ վճարային գործիքներով գործառնություններ	Արժեթղթերի թողարկում, գնում, վաճառք և սպասարկում, ներդրումային և բաժանորդագրական գործունեության իրականացում, վճարային փաստաթղթերով, ճանապարհային չեկերով, քարտերով և այլ գործիքներով գործառնություններ
Արտարժույթային գործառնություններ	Արտարժույթի գնում, վաճառք, (փոխանակում) դրամի, արտարժույթի ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքների կնքում.

**Լրացուցիչ գործառնություններ**

- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում,
- բանկային հաշիվների բացում և սպասարկում,
- Վճարային քարտերի տրամադրում, քարտային հաշիվների սպասարկում,

➤ Մասնաճյուղերում կամ վճարային տերմինալներով (բանկոմատներով) ֆինանսական գործարքներ կատարելու թույլտվություն:

➤ թանկարժեք մետաղների բանկային ձուլակտորների և հուշադրամների գնում, վաճառք և կառավարում,

➤ Վճարային չեկերի թողարկում, որով կարող են կատարել սովորական վճարումներ և այլ տեսակի վճարումներ, որոնք առաքվում են փոստով:

➤ պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգային գործառնություններ

➤ լիզինգային գործառնություններ

➤ թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի, փաստաթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունում,

➤ ֆինանսական և ներդրումային խորհրդատվության տրամադրում:

Հաշվարկային և դրամարկղային գործառնություններ- Բանկային գործառնություններ, որոնք իրենցից ներկայացնում են բանկի կողմից հաճախորդների համար բանկային հաշիվների վարում, դրանցով դրամական միջոցների կանխիկ և անկանխիկ մուտքագրումներ և ելքագրումներ:

Վճարային տերմինալ – Բանկի սեփականությունը հանդիսացող և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին պատկանող ինքնասպասարկման սարքեր, որոնց միջոցով հաճախորդները հնարավորություն ունեն իրականացնել գործարքներ (համալրել բանկային հաշիվը, կատարել վարկերի մարումներ և այլն):

Բանկային հաշիվ - բանկի կողմից Հաճախորդին առաջարկվող ընթացիկ, քարտային և առարկայագուրկ մետաղական հաշիվներ:

Ընթացիկ հաշիվ - բանկում Հաճախորդի անվամբ բացված Բանկային հաշիվ, որով իրականացվում են ընթացիկ Բանկային գործառնություններ:

Բանկի ներքին գործարքներ – Գործարքներ, որոնք իրականացվում են բանկի ներսում՝ Բանկում բացված հաշիվների միջև:

Ինքնասպասարկման սարք-Ավտոմատ գանձման մեքենա կամ վճարային տերմինալ, որը նախատեսված է առանց բանկի աշխատակցի օգնության հաճախորդի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքագրման կամ մուտքագրման, ինչպես նաև դրամական փոխանցումներ իրականացնելու համար:

Նույնականացում-Բանկի կողմից հաճախորդի ինքնության ստուգում՝ վերջինիս կողմից ներկայացված նույնականացուցչի հիման վրա:

Հավաստագրում-Բանկին ներկայացված նույնականացուցչի պատկանելիության ստուգում, որի շնորհիվ հնարավոր է ստուգել բանկում հաճախորդի բանկային հաշիվների և/կամ ավանդների գծով գործառնությունների իրականացման և/կամ դրանց վերաբերյալ տեղեկատվության ստացման համար հաճախորդի և/կամ վերջինիս լիազոր անձի իրավասությունը:

Ելնելով օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների ցանկից՝ բանկի կողմից մատուցվող ծառայությունները պայմանականորեն կարելի է դասակարգել ներկայացված ձևով:

**Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դասակարգումը**

Դասակարգման չափանիշները	Մատուցվող ծառայությունների տեսակները
Բանկային գործունեության առանձնահատկությունները	Առանձնահատուկ ծառայություններ Ոչ առանձնահատուկ ծառայություններ Միջանկյալ ծառայություններ
Բանկի միջոցների ներգրավման և տեղաբաշխման ձևերը	Ակտիվային գործառնություններ Պասիվային գործառնություններ
Ծառայություններ ստացած սուբյեկտները	Իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայություններ
Ծառայությունների մատուցման դիմաց վճարները	Վճարովի Անվճար

Ելնելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտների տեսակներից՝ ծառայությունները մատուցվում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող ծառայությունների շրջանակը կարող է լինել նույնը, սակայն սովորաբար տարբերվում է մատուցվող ծառայությունների ծավալների և տեսակների առումով: Ծառայությունների դիմաց գանձվող միջոցները ներկայումս հանդիսանում են բանկի եկամուտների կարևոր աղբյուր, սակայն բանկը բազմաթիվ դեպքերում մատուցում է վճարովի և անվճար ծառայություններ:

Բանկերն ինքնուրույն են որոշում վճարովի և անվճար ծառայությունների ցանկը, սահմանելով վճարի չափը՝ սակագները: Հաճախ բանկային ծառայությունները տարանջատվում են որպես եկամտաբեր, ցածր եկամտաբեր և ոչ եկամտաբեր, թանկ և էժան ծառայություններ: Այսպես, ակտիվային գործառնությունների մեծամասնությունը բանկի համար հանդիսանում է եկամտի աղբյուր, մինչդեռ պասիվային գործառնությունները պահանջում են որոշակի ծախսեր՝ տոկոսների վճարման տեսքով: Բանկերի կողմից մատուցվող ծառայությունները կարող են տարանջատվել նաև որպես բանկում հաշիվ ունեցող հաճախորդներին մատուցվող ծառայություններ և առանց բանկային հաշվի մատուցվող ծառայություններ: Առանց բանկային հաշվի պայմանագրի հաճախորդներին կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները, օրինակ՝ ՀՀ

տարածքից դուրս և ՀՀ-ի ներսում գումարների փոխանցում ու փոխանցումների ստացում, տարբեր արժույթների փոխարկում ու փոխանակում, չեկերի, այլ վճարային գործիքների կանխիկացում և այլն: Բավականին տարածված է բանկերի միջոցով տարաբնույթ վճարումների իրականացումը, երբ բանկը հանդես է գալիս իբրև համապատասխան մարմնի գործակալ: Տվյալ դեպքում բանկը մատուցում է ծառայություններ, մուտքագրում է գումարներ և սահմանված ձևով հաճախորդներին հավաստագրեր է տրամադրում համապատասխան վճարը (բյուջետային, կոմունալ և այլ) կատարելու վերաբերյալ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ տնտեսությունը չի կարող զարգանալ առանց կայուն, զարգացած բանկային համակարգի: Բանկային համակարգի որակապես նոր աստիճանի զարգացման առումով կարևորվում է դեպոզիտների ապահովագրության ինստիտուտների կայացումը, որի պարագայում հնարավոր կլինի առավելագույն բանկային համակարգ մղել բնակչության ունեցած ազատ դրամական միջոցները: Վերջիններս շահույթ են ստանում արտադրության ընթացքում ստեղծված հավելյալ արդյունքի վերաբաշխման շնորհիվ: Ժամանակակից պայմաններում բանկերի տնտեսական դերը հետզհետե ավելի է ուժեղանում, որովհետև ձևավորվում են տարբեր կարգի ձեռնարկատիրական ընկերություններ, որոնք սկզբնական շրջանում ֆինանսավորման խիստ կարիք են զգում:

Այսպիսով, բանկերը կատարելով դրամական միջոցների վերաբաշխման գործողություն՝ կենտրոնացնում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցները: Այդ ճանապարհով էլ ձևավորվում են տնտեսության վարկավորման ֆոնդերը և իրականացվում կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկավորումները, ինչպես նաև բնակչության պահանջումներին բավարարման համար սպառողական վարկերը: Ժամանակակից պայմաններում բանկերը չեն սահմանափակվում միայն իրենց հիմնական աշխատանքների իրականացմամբ: Բանկերը ոչ միայն սերտ կապի մեջ են արտադրողների հետ, այլ նաև թողարկում են տարբեր կարգի արժեթղթեր և դրանք տեղաբաշխում արդյունաբերական, տրանսպորտային, առևտրական և այլ բաժնետիրական ընկերություններում: Բացի այդ, բանկերը հաճախ ձեռք են բերում այդ ընկերությունների կողմից թողարկված բաժնետոմսերը և հետագայում դրանք վաճառում ավելի բարձր գներով, դրանով իսկ յուրացնում են ընկերությունների հիմնադրական շահույթի զգալի մասը: Միաժամանակ բանկերը ակտիվորեն մասնակցում են տարբեր ընկերությունների ֆինանսական գործառնություններին: Բանկերում են գտնվում խոշոր արդյունաբերական ընկերությունների բաժնետոմսերը: Դա նույնպես ուժեղացնում է բանկերի ազդեցությունը արտադրական ձեռնարկությունների գործունեության վրա: Ֆինանսական շուկայի ձևավորման ոլորտում իրականացված բարեփոխումներում, դրանց համակարգվածության ու ամբողջականության աստիճանով առանձնանում է բանկային համակարգը: Արդյունքում, ֆինանսական շուկայի միակ կայացած ինստիտուցիոնալ մասնակիցները՝ բանկերն են:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բագրատ Ասատրյան <<Բանկային գործ>> Երևան 2004թ
2. Արման Բագրատյան «Բանկային գործի հիմունքներ», Երևան 2003թ.
3. Լ. Հ. Բաղանյան «Բանկային գործի հիմունքներ», Երևան 2003թ.
4. Լ. Հ. Բաղանյան «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան 2010թ.
5. <http://www.nmc.am/hy/1431566830>
6. <https://www.arlis.am/>